ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԾՁԲ-22/99 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 12.09.2022թ. ժամը 14:30-ին Էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Կարինե Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բաղալյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Պրինտարմ » ՍՊԸ
2	«Սեկո-Պրինտ» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
			Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	400000	«Պրինտարմ » ՍՊԸ	327000	392400
		«Սեկո-Պրինտ» ՍՊԸ	340000	340000

4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտերի կազմման և ներկայացման, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 «Պրինտարմ » ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.2 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո՝ 2022 թ սեպտեմբերի 13-ին, ժամը 12:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 13.09.2022թ ժամը 12:30-ին

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման մասին.

5.1 **«Պրինտարմ » ՍՊԸ** -ի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում (Հավելված 1.2) հայտարարագիրը ներկայացնող անձի տվյալները սխալ է լրացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Պրինտարմ » ՍՊԸ**-ին շտկել 5.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.3 Հանձնաժողովի նիստը կշարունակվի մասնակցի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ 15.09.2022թ., ժամը 12:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 15.09.2022թ ժամը 12:30-ին

6. Արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 ««**Պրինտարմ » ՍՊԸ** -ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են 5.1 կետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել **«Պրինտարմ » ՍՊԸ** -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել **«Սեկո-Պրինտ» ՍՊԸ** -ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին

8.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արա Խաչատրյան /նախագահ/

---------- Հարություն Մարտիրոսյան

---------- Կարինե Մանուկյան

---------- Կարինե Բաղալյան /քարտուղար